

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-2-3-Ա

ք. Երևան

18.03.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի մարտի 18-ի նիստում քննարկեց 2015 թվականի փետրվարի 27-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ Օբչչեստվո Ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Էքստարիլիտիս» (107553, g. Moskva, Pugachevskaya 2-ya ul., dom 3, korp. 1, kv. 119, Russia) ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «COCOCHOCO KOKOШOKO» (հայտ №20131622) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերի եւ «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու , ներկայացնելու եւ քննարկելու» ՀՀ կառավարության 2010թ նոյեմբերի 18-ի N 1538 -N որոշմամբ հաստատված կարգի 107-րդ կետի 3-րդ, 119-րդ կետի 2-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մականշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 3-րդ դասի ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցման եւ միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «COCO», «COCO NOIR» (CHANEL SARL, Burgstrasse 26, CH-8750 Glarus,1196, 1108062, CH) բառային ապրանքային նշաններին, քանի որ համեմատվող նշաններն ունեն իմաստային նմանություն, այն է՝ համեմատվող նշաններում համընկնում են «COCO»

բառերը, որոնք հանդիսանում են առաջնային ընկալման տարրեր եւ անմիջապես զուգորդվում CHANEL ընկերության ապրանքանիշերի հետ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու և վկայագիր տալու մասին առաջ եկած նոր հանգամանքների պատճառով: Բողոքարկողը ներկայացրել է նամակ-համաձայնագիր CHANEL SARL ընկերության կողմից, որի առկայության դեպքում «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը չի կարող մերժվել:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքարկողի ներկայացուցիչ արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված «COCOCHOCO KOKOՍHOKO» (հայտ N°20131622) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել և գրանցման վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ